



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան, Աբովյան և Եղվարդ համայնքների մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Աստղիկ Հարությունյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, Անահիտ Սարգսյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ և Գրիգոր Պետրոսյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի ապրիլի 03
ք. Հրազդան
N 77-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2019 թվականի ապրիլի 03-ի N 77-Ա որոշման



Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Ը/Ը	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Աստղիկ Հարությունյան	ք. Եղվարդ, գ. Զովունի	40 000	
2	Անահիտ Սարգսյան	ք. Հրազդան, Կենտրոն, 44/1 շենք, 9 բնակարան	20 000	
3	Գրիգոր Պետրոսյան	ք. Աբովյան, 4 Միկրոշրջան, 23 շենք, 34 բնակարան	40 000	